## ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի օրվա առիթով

Սիրելի դպրոցականներ և ուսանողներ, ուսուցիչներ ու դասախոսներ, հանրակրթության ոլորտի աշխատողներ.

Շնորհավորում եմ ձեզ Սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ:

Այսօր մեկնարկել է 2012-2013 ուսումնական տարին, վերստին բացվում են հարյուրավոր կրթական հաստատությունների դռներ:

Կրթության հազարամյա պատմություն ունեցող մեր ժողովուրդը առանձնահատուկ հոգատարություն ունի դպրոցի և ուսուցչի հանդեպ: Սերը գիտելիքի և կրթության նկատմամբ նա մշտապես կրել է իր մեջ, և այսօր ձեր սերնդին է վիճակված արդի պահանջներին համահունչ շարունակելու ու զարգացնելու այդ ավանդույթները:

Ուսումնական տարվա սկիզբն ավետող այս օրն առավել հիշարժան է մեր առաջին դասարանցիների համար:

Ջերմորեն շնորհավորում եմ հատկապես նրանց և մաղթում հարուստ ու բովանդակալից ուսումնառության տարիներ:

Կրկին շնորհավորելով Գիտելիքի օրվա առիթով՝ մաղթում եմ ուժ ու եռանդ և հաջողություններ նոր ուսումնական տարում:

Թող սեպտեմբերի 1-ը ձեզ համար դառնա հաջողությունների ու ինքնահաստատման ճանապարհի սկիզբ:

**ՀՀ Սյունիքի մարզպետ** **Ս. Խաչատրյան**

1 սեպտեմբերի 2012թ.